«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Գլոբալացումը որպես համաշխարհային հիմնախնդիր

ԱՌԱՐԿ Աշխարհագրություն

ՀԵՂԻՆԱԿ Էլմիրա Կարապետյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Բավրայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլոբալացումը որպես համամոլորակային հիմնախնդիր---------- 4

Եզրակացություն----------9

Օգտագործված գրականություն----------10

Ներածություն

Յուրաքանչյուր հետազոտական աշխատանք կատարելու կարևոր պայմանը համարվում է հիմնախնդրի պարզումը: Հիմնախնդիրը գիտական հարց է, որը լուծելու համար հասունացել են օբյեկտիվ պատճառներ: Առաջ քաշելով հիմնախնդիրը հետազոտողը հաստատում է.1. տվյալ պահին առա ոչ բավարար գիտելիքների մակարդակը, որը պայմանավորված է նոր փաստերի և կապերի բացահայտման անհրաժեշտությամբ, 2. հասարակության նոր պահանջների առկայությունը, որն արտահայտվում է առկա գիտելիքների սահմաններից դուրս գալու և նոր գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությամբ: Մեր կողմից դիտարկվելու է գլոբալացմանհամամոլորակային հիմնախնդիրը:

Հետազոտության նպատակի որոշումը բխում է հիմնախնդրից: Այսինքն հիմնախնդրի լուծումը ինքնին հանդիսանում է հետազոտության նպատակը: Հետազոտական գործունեությունն իրականանում է այն ժամանակ, երբ նպատակաուղղված է և դրդապատճառներով հիմնավորված: Ըստ էության նպատակը իր մեջ արտացոլում է հետազոտության մտահղացումը: Միաժամանակ պետք է նկատենք, որ նպատակի որոշման օգնությամբ միաժամանակհետազոտողը պարզում է հետազոտական աշխատանքի իրականացման հիմնական ուղղությունները: Ըստ այդմ մեր կողմից, որպես հետազոտության նպատակ ընտրվել է գլոբալացման համաշխարհային հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրությունը և վերլուծությունը:

Անդրադառնալով հետազոտության արդիականությանը, շեշտենք, որ արդիական հետազոտությունները դիտարկում են այն հարցերը, որոնք առավել սուր հնչեղություն ունեն տվյալ ժամանակաշրջանում և ըստ այդմ պահանջում են հրատապ լուծում: Մեր ներկայացրած հիմնախնդիրը արդիական է, քանի որ նրա ուսումնասիրման և վերլուծության կարևորությունը արտահայտվում է մարդկային կյանքի բոլոր ոլորտներում:

Գլոբալացումը որպես համաշխարհային հիմնախնդիր

Մեր հետազոտական աշխատանքում մենք կդիտարկեենք գլոբալացումը, ներկայացնելով այն բացասական հետևանքները, որոնք առաջանում են այս համաշխարհային գործընթացի արդյունքում: Նախ խոսենք տնտեսության գլոբալացման մասին: Կապված դրա հետ, նշենք, որ փորձագետները գլոբալիզացիան սահմանում են որպես «աշխարհի երկրների աճող տնտեսական փոխկախվածություն, որի արդյունքում կատարվում է ապրանքների և ծառայությունների միջազգային գործարքների ծավալի և համաշխարհային կապիտալի շրջապտույտի աճ»[7, էջ98]: Մեկ այլ ձևակերպմամբ գլոբալիզացիան դա. «Ապրանքների, ծառայությունների, կապիտալի, աշխատուժի, գիտելիքի միասնական շուկա ունեցող համաշխարհային տնտեսության վերածման գործընթացն է: Լան իմաստով գլոբալիզացիան համաշխարահային տնտեսության բոլոր սուբյեկտների համընդհանուր փոխկախվածություն է, որը ձևավորվում է տնտեսական, քաղաքական, մշակութային, հասարակական կապերի բաց համակարգի պայմաններում, հիմնված ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների վրա:»[4, էջ213]: Պատմական ակնարկ կատարելով համաշխարհային տնտեսության գլոբալացման ձևավորման ընթացքին, պետք է փաստենք, որ նրա առաջացման սկիզբ կարելի է ընդունել նախորդ հազարամյակը, երբ համաշխարհային տնտեսությունը նոր էր սկսել ձևավորվել: XIX-XX դդ. գլոբալիզացիայի ուժեղացումը հանգեցրեց համաշխարհային տնտեսության ձևավորման:Արդեն այդ ժամանակներում մասնագետները առաջ քաշեցին միջազգայնացում հասկացությունը, որը ենթադրում էր համաշխարհային տնտեսության մեջ երկրների մասնակցության աճ:Երկու համաշխարհային պատերազմների և 1930թթ.ականների տնտեսական ճգնաժամի պատճառով գլոբալացումը որպես համաշխարհային գործընթաց չկայացավ և միայն XXդ. կեսերին այն նորից թափ առավ: Գլոբալացման գործընթացում ձևավորվում են արտադրական, տեղեկատվական, ֆինանսական և նորորարական ցանցեր: Գլոբալացման ընթացքում կատարվում են, կապիտալի, արտադրության, նախաձեռնողականության ինտերնացիոնալացում: Նախքան դրանցանդրադառնալը, նախ ստուգաբանենք «միջազգայնացում» հասկացությունը: Մասնագիտական

գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գլոբալացումը որպես տնտեսական կատեգորիա համաշխարհային տնտեսության մեջ երկրների մասնակցության ակտիվացումն է, իսկ արտադրական-տնտեսական ոլորտում կայուն միջազգային կապերի ձևավորումը հիմնված աշխատանքի միջազգային բաժանման վրա:

Անդրադառնալով կապիտալի միջազգայնացմանը, նկատենք, որ վերջինը ենթադրում է ազգային կապիալների միավորման գործընթաց, որն արտահայտվում է տարբեր պետություններում տնտեսավարող սուբյեկտների կողմից ընկերությունների ձևավորմամբ: Ըստ այդմ նշենք, որ գործում են միջազգայնացման երկու մակարդակներ՝ 1. միկրոտնտեսական՝ կազմավորված գլխավոր և այլ երկրներում տեղաբաշխված դուստր կազմակերպությունների կապերով և 2. միջազգային՝ ձևավորված միջպետական կապերով(օր. Եվրոպական Միությունը):

Խոսելով արտադրության միջազգայնացման մասին, պետք է նշեն, որ վերջինը տարբեր երկրներում տեղաբաշխված ձեռնարկությունների միջև կայուն արտադրական կապերի ձևավորման միջոցով կապիտալի տեխնոլոգիական օգտագործման եղանակ է, որի արդյունքում յուրաքանչյուր երկրում կատարվող արտադրությունը դառնում է համաշխարհային արտադրական գործընթացի մի օղակը: Այս գործընթացը կարող է իր հետ բերել աշխատուժի շահագործման ռիսկեր:

Ներկայացնելով նախաձեռնողականության միջազգայնացումը, որպես համաշխարհային գլոբալացման ասպեկտ, պետք է նկատենք, որ վերջինը ենթադրում է արտադրական հարաբերություններ, որոնք զարգանում են կոնկրետ ֆիրմայի և նրա գործընկեր հանդիսացող արտերկրի կազմակերպության միջև կապված ապրանքների և ծառայությունների արտահանման հետ: Գլոբալացման սրացման արդյունքում նկատվում են հետևյալ բացասական երևույթները՝ ազգային ձեռնարկությունների մեծ մասը ունենում է սեփական շուկայի և ապրանքների վաճառքի հետ կապված սահմանափակումներ: Վերջինը նվազեցնելու, երկրների մրցունակությունը բարձրացնելու, արտադրության մասշտաբները ընդլայնելու միակ ուղին միջազգային չափանիշներին համապատասխանեցումն է: Տնտեսագիտության մեջ այդ գործընթացը ընդունված է անվանել ձեռնարկության գործարարության միջազգայնացում: Դեռ տասնամյակ առաջ գլոբալացումը կարծես միտում էր, որն

անհնար էր կանգնեցնել: Ապրանքների, կապիտալի, աշխատուժի, գաղափարների փոխանակումը աճելով, փոխակերպեց համաշխարհային տնտեսությունը: 1986-2018թթ. համաշխարհային առևտուրն աճել է ՀՆԱ-30%-ից մինչև 60%, իսկ օտարերկրյա ներդրումների աճը կազմել է 0,4%-1,4%: Վերջին տարիներին գլոբալացումը կանգ է առել, որը բացատրվում է արտերկրի ներդրումային հոսքի նվազմամբ: Առևտրի և ներդրումների աճը ունեցավ երկարատև ազդեցություն, հետևաբար շատ երկրներում գլոբալացման դադարեցումը կամ «ապագլոբալացման» սկիզբը դեռևս աննկատելի է: Այն մարդիկ, ովքեր տուժում են գլոբալիզացիայի հետևանքով ձգտում են պաշտպանել իրենց եկամուտները և ապրելակերպը կատարելով իրենց ներդրումները ներպետական արտադրության ոլորտում, հակադրվելով միջազգային կազմակերպությունների գործունեությանը: Այն, որ գլոբալացման աճը կարող է հանգեցնել ազգային ժողովրդավարության անկմանը, դեռ իր ժամանակին կանխատեսել էր Կարլ Պոլանին իր «Մեծ փոխակերպումը» գրքում: Իսկ Հարվարդի պրոֆեսսոր Դանի Ռոդրիկը իր աշխատություններում, ինքնակառավարումը և գլոբալացումը համատեղ «անհնար եռյակ» են: Երկրները կարող են իրենց թույլ տալ երեք ինստիտուտներիցմիայն երկուսը, բայց ոչ բոլորը միանգամից[4]:Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրականում չի կարելի գիտական վերլուծություն համարել երկրների ՀՆԱ-ի շնչի հաշվով վիճակագրական արդյուքները ընդունելով, որ ժամանակակից աշխարհը միատարր չէ, մինչդեռ ժամանակակից աշխարհը գլոբալ չէ, այլ իրենից ներկայացնում է մոտ 200 տարբեր տնտեսական և սոցիալական զարգացում ունեցող երկրների սիմբիոզ: Այդ սիմբիոզը պայմանականորեն կարելի է բաժանել խմբերի.

- ✓ Զարգացած կապիտալիստական երկրներ-որոնք արդեն անցել են ինդուստրացման փուլը
- ✓ Զարգացող երկրներ-որոնք ձգտում են հասնել զարգացած երկրներին
- ✓ Վաղ կապիտալիստական զարգացող երկրներ, որոնք պայքարում են գոյատևելու համար (Լատինական Ամերիկա, Ասիա, Աֆրիկա)
- ✓ Թույլ զարգացող երկրներ, որոնք պայքարում են գոյատևելու համար
- ✓ Ձախողված երկրներ, որոնք չեն կարողացել ստեղծել կայուն պետականություն(Failed states)[5]:

Եթե փորձենք ներկայացնել համաշխարհային տնտեսության մեջ երկրների տնտեսությունների դոմինանտության հիերարխիկ կառուցվածքը, կունենանք հետևյալ պատկերը (արտահայտված %-երով)[6]:

2010թ.	ԱՄՆ-13,3	Չինաստան-12,3	Ճապոնիա-6,9
2030թ.	ԱՄՆ-10,1	Չինաաստան-18	Ճապոնիա-6,3

Ներկայացնելով գլոբալացման վնասները, կանգ առնենք դրանցից կարևորներիվրա. 1. Բնական ռեսուրսների սպառման խնդիրը, 2. սպառազինությունների մրցավազքը, 3. զարգացած և զարգացող երկրների միջև առկա զարգացման մակարդակների տարբերությունը, որը միջազգային լարվածության և անկայունության աղբյուր է, 4. սննդի խնդիրը, որի արտադրությունը համահունչ չէ բնակչության աճին, 5. ժողովրդագրական խնդիրը (երկրի բնակչության թվի ավելացումը), 6. աղքատության խնդիրը, որը որոշ երկրներում ձևավորում է սով, 7. «աղքատ» երկրներից դեպի «հարուստ» երկրներ մարդկանց շարունակական տեղափոխություն՝ միգրացիան[7]: Թվարկածին կարելի է ավելացնել նաև միջազգային ահաբեկչությունը, թրաֆիկինգը, զանգվածային գործազրկությունը: Ռեսուրսների համար պայքարը կապված է այնպիսի երևույթի հետ, ինչպիսին է ժամանակակից միջազգային ահաբեկչություն: Տարածված կարծիք կա, որ տեռորը թույլերի զենքն է ուժեղների դեմ[3, էջ29]:Անդրադառնալով գործազրկության խնդրին, պետք է նկատենք, որ ավելի մեծ թվով կարող են ազատվել արտադրական գործունեությունից, չիմանալով թե, ինչպես կարող են իրենց ազատ լրացնել ժամանակը: Գործազրկության խնդրին անդարադարձել է Ի. Իլյինը, նշելով, որ ստիպողական անգործությունը առաջացնում է անիմաստ դատարկություն, անասելի տխրություն, ժամանակը ինչ-որ բանով լցնելու ցանկություն, որից հետո գալիս է օրինականության ժխտումը և ազնիվ աշխատանքից հրաժարումը [2, էջ317-318]:

Ընդհանրացնելով պետք է ասենք, որ գլոբալացումը իրավամբ կարելի է համարել շուկայական քաղաքակրթության արդյունք, միևնույն ժամանակ պետք է համաձայնվել այն պնդման հետ, որ գլոբալացման սոցիալական էությունը դա «արևմտյան երկրների կողմից պլանավորված հավակնոտ պատերազմ է, որն ուղղված է ոչ միայն համաշխարհային իշխանության ձևավորման համար, այլև

մարդկության էվոլյուցիոն գործընթացին տիրապետելու և այն իր շահերին համապատասխան կառավարելու համար[1, էջ452]:

Գլոբալացման խնդիրը ներկայացնելով Հայաստանի Հանրապետության համար, նախ պատասխանենք այն հարցին, թե ինչ կարող է տալ գլոբալիզացիան Հայատանին: Նախ դիտարկենք դրական կողմը. Գլոբալիզացիան հնարավորություն է տալիս Հայաստանի տնտեսությանը դուրս գալ միջազգային շուկա, իր ազգային արտադրանքը ներկայացնել աշխարհին,ինտեգրվելով համաշխարհային տնտեսական գործընթացներին: Բայց մյուս կողմիցտնտեսական գլոբալացման հետևանքով ավելի դժվար է դառնում երկրի տնտեսական գործընթացների կառավարումը, քանի որ դրանք կախված են միջազգային կազմակերպությունների և վերազգային կորպորացիաների գործունեության ազդեցությունից: Հետևաբար Հայաստանի համար առավել կարևորվում է միջազգգային տնտեսական ինտեգրացման և գլոբալացման գործընթացներում արդյունավետ ներառվելը:Հաշվի առնելով, որ Հայաստանը դեռ չի հաղթահարել անցումային շրջանը և չի կարողացել ստեղծել նոր իրավիճակին համապատասխան տնտեսություն, հետևաբար Հայաստանում, ինչպես մյուս անցումային երկրներում արտադրանքի և ծառայությունների մուտքն արտաքին շուկա դժվար է, ուժեղանում է արտասահմանյան ներդրումների համար մրցակցությունը, կատարվում է որակյալ մասնագետների արտահոսք: Հայաստանը Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ), ինչպես նաև ԱՊՀ անդամ է և սերտ հարաբերության մեջ է գտնվում Եվրոպական միության հետ, նաև հանդիսանում է Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության(ՍՏՀԿ)անդամ է և դրա հետ կապված մասնակցել է մաքսային հարաբերությունների վերաբերյալ համաձայնագրերի կնքմանը:Միաժամանակ պետք է նշենք, որ Հայատանը ունի նախադրյալներ գլոբալ աշխարհում ինտեգրվելու համար, որը վերաբերում է զբոսաշրջության զարգացմանը, որը միջազգային տնտեսական կապերի զարգացման յուրահատուկ միջոց է: Տնտեսական տարբեր ապրանքանիշների հետ հայակական բրենդի կարևոր մաս է կազմում նաև մշակույթը(Արշիլ Գորկի, Շարլ Ազնավուր, Վիլյամ Սարոյան և այլն) [8, էջ4-6]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելով և ամփոփելով հետազոտական աշխատանքի արդյունքները, պետք է նկատել, որ գլոբալացումը որպես համաշխարհային հիմնախնդիր հանդես եկավ 20-րդ դարի վերջին տասնամյակում, որի մասին չնայած գրվել են բազմաթիվ աշխատություններ, կատարվել տարաբնույթ հետազոտություններ, բայց այդուհանդերձ ոչ մեկին չի հաջողվել ամբողջովին դրական կամ բացասական որակել այդ գործընթացը: Չնայած գլոբալացման արդյունքում պետությունների միջև տնտեսական սահմանները վերացան, բարձրացավ միջազգային համագործակցության մակարդակը, ձևավորվեցին անդրազգային կազմակերպություններ, բայց դրա հետ միասին դրսևորվեցին բացասական երևույթներ, այդ թվում ստանդարտացումը և մշակութային նույնականացումը: Երբ գլոբալացումը դիտարկում ենք ազգային և համամարդկային արժեքների համատեքստում, տեսնում ենք, որ այն խախտում է ազգային ավանդական արժեքները և փոձում ձևավորել համընդհանուր կամ համամարդկային արժեքներ: Մինչդեռ պետք է համաձայնվել այն գաղափարի հետ, որ դա այնքան էլ դրական տենդենց չի կարելի համարել: Այսպես օրինակ. Յուրաքանչյուր երկրի կրթական համակարգի հիմնական առաքելությունը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կրելու է իր ազգին բնորոշ արժեքները, ազգային լեզվամտածողությունը, ազգային մշակույթը, իսկ գլոբալացման շարունակական ընթացքը կարող է տանել ազգերի միաձուլման: Իհարկե պետք է նաև ընդունել, որ հասարակության զարգացումը չի կարող ընթանալ միայն հիմք ընդունելով պահպանողական գաղափարները, այլ ժամանակին համընթաց քայլելով, հաղորդակցվելով համամարդկային արժեքներին, առաջնայնությունը տալ ազգային արժեքներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Зиновьев А.А. Фактор понимания / А.А. Зиновьев-М.: Алгоритм Эксмо, 2006г.
2. Ильин И.А. Путь к очевидности.-М.: Республика, 1993г.
3. Пиджаков А.Ю. Терроризм История возникновения /Байрамов Ш.Б. Лукин В.Н. и другие Международный терроризм: Вызовы и противодействие в 3 т./Глав. Ред. В.Л.Михеев, СПб «Архей», 2011г. Т.1, История и современность, 2011г.-383ст.
4. Симония Н. А. Глобализация и проблема мирового лидерства /Н. А.Симония, А.В.Торкунов//Международная жизнь-2013-№3http://russiancouncil.ru/inner/?id_4=1630.
5. The Economist, September 10th, 2011, p.78
6. https://econs.online/articles/opinions/kak-globalizatsiya-ispytyvaet-demokratii/
7. http://www.intelros.ru/readroom/credo_new/k3-2013/20016-globalizaciya-i-osnovnye-problemy-chelovechestva.html
8. http://alternative.am/wp-content/uploads/2017/03/%D4%B1%D5%AC%D5%BE%D5%A1%D6%80%D5%A4-%D5%84%D4%BB%D5%90%D4%B6%D5%88%D5%85%D4%B1%D5%86-%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D6%80%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A3%D5%AC%D5%B8%D5%A2%D5%A1%D5%AC%D5%AB%D5%A6%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D5%B6-%D6%87-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8.pdf